ՆՈՐ-ԴԱՐ

№ 200 ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հ/ապաթ 2 Դեկտեմբերի

1889

Հ/ապաթ 2 Դեկտեմբերի ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 200

Տարեկան 10 րուբլի, վեց ամսոր՝ 6 րուբլի, երեք ամսոր՝ 3 ր. 50 կ., ամսոր՝ 1 ր., Հատով՝ 5 կոպէկի
Բաժանորդ դրւում են Թիֆլիսում մեհեան խմբագրատանը։

Խմբագրութիւնը Թիֆլիս. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տոն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնների ընդունւում են ամեն լրագրներում։ Յայտարարութիւնների գառին 2 կ., բնկամների համար կրկնապատիկ։

ԿԸՂԸՒԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ԱՄԵՆՕՐՅԱ ԹԵՐԹ

Թիֆլիսում

ԱՌԱՋԻԿԱՑ 1890 ԹՈՒԱԿԱՆԻՆ

(Ս օ ց ի ա լ ա կ ա ն տ ա ր ի)

Կը հրատարակուի նոյն չէզոով և ծրագրով

Խմբագրութիւնը կստանայ և սեփական հեռագիրներ

Տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի, Հատով՝ 5 կոպ.։

Եւրոպալի, Թիւրքիալի, Ամերիկալի և այլ հեռաւոր երկիրների բաժանորդները վճարում են տարեկան 30 ֆրանկ։

Բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի 1-ից միայն։

Թիֆլիսում բաժանորդ են գրւում ինչոյն «Նոր-Դար»-ի խմբագրատանը։

Խմբագրատունը գտնւում է Բարօնսկայա փողոցում, պօստ-հեռագրատան դէմ, տուն № 12.

Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան՝ Тифлисъ, въ Редакцію ежедневной газеты «НОРЪ-ДАРЪ» կամ Tiflis (Caucase) Rédaction du journal «Nor-Dar».

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

Տիկին ԵԿԱՏԵՐԻՆԷ ՋՈՒՐԱԲԵԱՆ ԹԱՅԻՐԵԱՆՑԸ և իւր որդիքն՝ ՔՐԻՍՏԱՓՈՐ և ՅՈՎՀԱՆՆԷՍ և դստերքը յայտնում են, որ Ա.Ղ.Է.Ք.Ս.Ա.Ն.Դ.Ր Ղ.Ա.Զ.Ա.Ր.Ե.Ա.Ն Թ.Ա.Ց.Ի.Ր.Ե.Ա.Ն.Ց.Ի մահուան քառասունքի օրը հոգեհանգիստ կը կատարուի Ս. Նշան եկեղեցում, կիրակի, դեկտեմբերի 3-ին, ժամը 11-ին, ուստի խընդրում են բարեկամներին և ծանօթներին յարգել հանգուցեալի լիշատակը իրենց ներկայութեամբ։

2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Մի կարգ թղթակցութիւնների առթիւ։
Հեռագիրներ։
Քրոնիկոն.—Լուրեր։
Քաղաքական.—Քաղաքական լուրեր։
Խառն լուրեր։
Բանասիրական. — Անգին կոյտ (վերջ.)։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Ա Զ Գ

«Նոր-Դար»-ին 1890-ին բաժանորդ գրուողը կարող է այս դեկտեմբերի 1-ից ստանալ համարները։

Բաժանորդագրութիւնը շարունակւում է. խնդրում ենք մեր բաժանորդներից շտապեն վերանորոգելու բաժանորդագրութիւնն առաջիկայ 1890 համար, որպէս զի բաժանորդների հասցէները ժամանակին տպուին և սխալմունքները տեղի չունենան։

Թիֆլիս, 1 դեկտեմբերի 1889

ՄԻ ԿԱՐԳ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԹԻՒ.

Խմբագրութեանս ստացած թղթակցութիւնների մէջ լինում են և գրութիւններ, որոնք վերաբերում են մեր դպրոցներում գործող ուսուցիչներին, հոգաբարձուներին, միով բանիւ մեր դպրոցների վարչութիւններին։ Դանգատւում են ուսուցիչներից, գանգատւում են հոգաբարձուներից, գրում են մեզ շատ անգամ այնպիսի բաներ, չնչին բաներ, որոնց տպագրութեան տալն աւելորդ է և անօգուտ։ Մեր տարրական-եկեղեցական դպրոցները և թէ մի քանի դպրոցները ենթարկուած են օրէնքով հոգևոր իշխանութեան իրաւասութեան. այդ դպրոցներն ունին իրենց վարչութիւնները, որոնք վարում են դպրոցների գործերը, կառավարում են դպրոցները հոգևոր իշխանութեան պատասխանատուութեամբ։ Մի աշակերտ ուսուցչի քմահաճութիւնից դասատունը չէ փոխում, մի ուսուցիչ իրեն հասանելի ռոճիկը չէ ստանում, մի ուսուցիչ ազատ է, անհամապատասխան իւր ստանձնած պաշտօնին և իւր բարքով և աշակերտների հետ ունեցած խօսակցութիւններով գայթակղեցնող է, մոլորեցնող է. այդ ամենը վերաբերում է անմիջապէս դպրոցական վարչութեան. գանգատուողը ծնող է, աշակերտ է, ուսուցիչ է, դրանք աւելի էլ պէտք է իրենց գանգատներով դիմեն դպրոցական վարչութեան և եթէ իրենց գանգատն առանց հետևանքի է մնում այդտեղ, այն ժամանակ պէտք է դիմեն տեղական հոգևոր իշխանութեան, իսկ այնուհետև հոգևոր Ծայրագոյն իշխանութեան։ Այդպիսով գործը կը պարզուի, երկու կողմն էլ ինչ որ ասելու ունին կարող են ասել, հոգևոր իշխանութիւնը կարող է և ձեռընհաս է գործը տեղն ու տեղը քննելու և հարկաւորը շուտափոյթ տնօրինելու։ Մամուլին գիմելով, շատ անգամ չնչին բաների համար, գործը ոչ թէ լաւ է ընկնում, այլ և մեծ մասամբ ոչինչ չէ լինում և դեռ աւելի խճճւում, որից օգտւում են աւելի նրանք, որոնց դէմ է ուղղած գանգատը։ Պէտք թէ մէկը մեզ գրում է, թէ այս ինչ դպրոցի հայերէն լեզուի ուսուցիչը հայերէն չգիտէ, շատ սխալներով է գրում և իւր թեթևամիտ, ազատամիտ, որ մեզանում միևնոյն է թէ անբարոյական, մտքերով մոլորեցնում է աշակերտին։ Եւ այդ տեսակ թղթակցութիւնը մենք տպեցինք և մի քանի օրից էլ յետոյ ստացանք մի ուրիշ թղթակցութիւն, որ առաջին թղթակցութիւնը կրքի ծընունդ է համարում և յիշեալ ուսուցչի մասին գրածները սուտ համարելով նրա բարեմասնութիւնն է թւում։ Այդ, ինչ իմացանք մենք և ինչով պարզուեցաւ, թէ վերոյիշեալ ուսուցիչը հայերէն գիտէ թէ չգիտէ և այլն։

Խօսք կայ, որ այդ բանը կարող է և միջոց ունի և, աւելացնենք, պարտաւոր է ստուգելու դպրոցական վարչութիւնը։ Եթէ նա այդ չէ անում, այն ժամանակ հոգևոր իշխանութիւնը կարող է քննութիւն նշանակել և իսկոյն կը պարզուի գործը, ուսուցչի տուած դասերից և նրա հայերէն գրածներից իսկոյն կարելի է իմանալ, թէ նա հայերէն գիտէ թէ չգիտէ և թէ ինչքան գիտէ. իսկ նրա քարոզած մտքերի մասին տեղն ու տեղը հարց ու փորձ անելով կարելի է ճշմարտութիւնն իմանալ։

Այս վերջին ժամանակներս Դանձակից հետզհետէ թղթակցութիւններ, լուրեր ենք ստանում լի գանգատներով այնտեղի հայոց դպրոցների մի քանի ուսուցիչների դպրոցում բռնած ընթացքի մասին։ Մենք այդ տեսակ թղթակցութիւններն և լուրերը չենք հրատարակել և չենք հրատարակում։

Նոյեմբերի 30-ի, ուրբաթ օրուայ «Նոր-Դար»-ի համարը կարելի չեղաւ հրատարակել, թէական թերթիս խմբագրութիւնը չատ աշխատեցաւ «Նոր-Դար»-ի գրաշարների մեծ մասը հիւանդ է, իսկ քաղաքիս մէջ տպարաններում բանող հայոց լեզուի գրաշարներից չկարողացողները և ոչ մէկին վարձել, որովհետև գրանք էլ կամ նոյնպէս հիւանդ են կամ գործի մէջ լինելով՝ օրով չեն կարողանում բանել։ Հետզհետէ համարները հրատարակելու գործը թէպէտև դժուարանում է, բայց հաստատում ենք, որ ընթերցող է մէ ինչ պատ է, պարտ էլ կը յարմինք և «Նոր-Դար»-ի համարները կանոնաւոր օրը կը տեսնին։ «Նոր-Դար»-ի բաժանորդների ներողամտութիւնն ենք խնդրում առ այժմ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԻՒՍԻՍՈՒԱԾԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 նոյեմբերի.— Ներքին գործերի մինիստրը նահանգապետներին գրած շրջաբերականով յայտնում է, որ ժանտախտը պակասում է և մատնացոյց է անում ուրիշ վարակիչ ախտերի դէմ կռուելու վրայ, ուստի որպէս ժամանակաւոր միջոց պատուիրում է գործադրել անասնաբուժական լանձնաժողովների և շրջաբերականի մէջ մուծուած այն կանոնները, որոնք վերաբերում են թոքերի բորբոքման, սիբիրեական ախտի, դիֆտերիտի և այլն։

Այսօր բացւում է երկաթուղային ներկայացուցիչների ընդհանուր համագումարը։

ՍԵԻԱՍՏՕՊՕԼ.— Լրտեսութեան համար ձերբակալուած անգլիացու մասին լուրը անհիմն է. ոչ անգլիացի և ոչ մինը ձերբակալուած չէ բերդի ուրուագիծը նկարելու համար։

ՄԻՏԱՒԱ, 30 նոյեմբերի. — Այսօր արդարադատութեան մինիստրը բաց արաւ այստեղ դատական նոր հիմնարկութիւնները։

ԼՕՆԴՕՆ.—Այստեղ ածխակիրներն և գազային ընկերութեան ծառայողները գործադուլ արեցին. բայց գազային ընկերութեան համար նոր բանուորներ գտնուեցան և այդպիսով գործը դադար չառաւ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Այսօր այստեղի քաղաքային խորհրդի նիստում քաղաքագլուխը յայտնեց, որ ինֆլուէնցայի առթիւ, քաղաքապետի նախագահութեամբ և հիւանդանոցների գլխաւոր բժիշկների մասնակցութեամբ արտաքոյ կարգի մի ժողով կայացաւ, որի մէջ վճռուեց, որ ինֆլուէնցան խոլերայի հետ ոչինչ կապ չունի և խոլերայի կարապետն էլ չի կարող լինել։

«День»-ը լսել է, որ Ֆինանսների մինիստրն առաջիկայ տարուանից արգելել է ուրիշ երեք բանկային գրասենեակներին մասառ մաս վճարումով ներքին փոխառութեան տոմսեր ծախելու։

ՐԻԳԱ.—Երէկ արդարադատութեան մինիստրն այստեղ բաց արաւ դատական նոր հիմնարկութիւնները։

ՋԱՆԶԻԲԱՐ.—Երեք օր առաջ գերմանական զօրքերը պօրուչիկ Շմիդտի առաջնորդութեամբ յարձակում գործեցին Բուշիրի վրայ, որ 28 մարդ կոչրցրեց։ Ինքը Բուշիրը չքացաւ։

ՎԵՆՆԱ.—Պրօֆէսսօր Նաթանիէլէն ինֆլուէնցայի մասին երէկուայ կարդացած դասախօսութեան մէջ այն միտքն յայտնեց, որ այդ հիւանդութիւնը չպիտի համարել երբեք կարապետ աւելի վտանգաւոր վարակիչ հիւանդութեան։ Կառավարութիւնը չէխական ուսանողների ընկերութեանը արգելել է Հուսին կանգնելիք արձանի համար նուիրատուութիւններ հաւաքել։

ՍՕՖԻՍ.—30 միլիոն փոխառութեան գրաւականը Յարերբուրգ-Ս.-Փիթ-Վակաբել և Եամբուլի-Բուգաս երկաթուղիներն են։ Եթէ նշանակեալ ժամանակից կէս տարի անցնելուց յետոյ կուպօնները և օբլիգացիաները չեն վճարուիլ, ապա վերոյիշեալ երկաթուղիների վաճառաշահութեան իրաւունքը լանդերբանկին և միացեալ բանկերին կանցնի։ Իսկ եթէ պայմանագրում ընդունուած հատուցումն երկու տարուայ ընթացքում չի կատարուիլ, բանկն իրաւունք է ստանում պարտատէրներին դոհացում տալու համար գրաւ գրուած երկաթուղիները ծախելու։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 դեկտեմբերի,— Երէկ վախճանեցաւ գիտութեան ճեմարանի փոխ-նախագահ, Բուենեակովսկին։

Բուբինշտեյնը յայտարարեց, որ բոլոր այն գումարները, որոնք ֆօնդին են ներկայացուած՝ իրեն անօրինութեամբ գործադրելու, նա նշանակում է աւելացնել այն գումարի վրայ, որը նշանակուած է Պետերբուրգի կօնսերվատօրիալի և Կայսերական ռուսաց երաժշտական ընկերութեան բաժնի համար շէնք շինելուն։

«С. Петерб. Вѣд.»-ն լսել է, որ նոր կանոնադրութիւն է մշակուած գիւղական բանկերի համար։ Բոլոր գործառնութիւնները պէտք է խիստ հսկողութեան ենթարկուին. հիմնական գրամագլուխը պէտք է 3000 րուբլուց պակաս չլինի. փոխառութեան ամեն ակարճ ժամանակամիջոցը 6 ամիս է. ամենաերկարաւուը՝ 3 տարի։ Բանկեր բանալու թոյլտուութիւնը պէտք է լինի միայն նահանգապետների վրկայութեամբ՝ պահանջ լինելու մասին։

ՔՐՈՆԻԿՈՆ

Շաբաթ երեկոյեան, դեկ. 2-ին Թիֆլիսի ժողովարանում տեղի պիտի ունենար պարահանդէս «Հայերէն դպրերի հրատարակութեան ընկերութեան» օգտին։ Այդ պարահանդէսը, ինչպէս ընկերութեան վարչութիւնը մեզ հաղորդում է, յետաձգուած է և պարահանդէսը տեղի կունենայ դեկտ. 23-ին։ Ինչու համար է ընկերութեան օգտին պարահանդէսը յետաձգուած—Որովհետև տոմսակները (2 րուբլիանոց և 1 րուբլիանոց) չեն ծախուած։ Ուրեմն այնպիսի մի կարևոր և օգտաւէտ ընկերութիւն, ինչպիսին է անտարակոյս Հայերէն դպրերի հրատարակութեան ընկերութիւնը, նրա օգտին տուած պարահանդէսին 1 ր. կամ 2 ր. ինայում է, այն ինչ... բայց թող ընթերցողը կարդայ «Նոր-Դար»-ի «Բանուործութիւնը հայերի մէջ» առաջնորդողները։

Ինչպէս «Նոր-Դար»-ից և լրագրերում արած յայտարարութիւններից գիտէ ընթերցողը, ի պատիւ Արիստակէս Սըբբազանի ստորագրութեամբ պատրաստուած ճաշը տեղի ունեցաւ հինգշաբթի, նոյեմ. 30-ին Թիֆլիսի կլուբումը։ Ճաշին մասնակցողները մօտաւորապէս 145 հոգի էին, դրանց թւում և մի քանի հրաւիրեալներ։ Թէպէտև ճաշի գինը 3 ր. էր նշանակուած, բայց սովորական ճաշերից շատ լաւ էր և սեղանին մասնակցողները ուրախ անցկացրին. ճաշի մի քանի ժամերը չատ կենաց բաժակներ խմեցին և աւուր պատշաճի կարճառօտ ճառեր խօսուեցան. Արիստակէս սրբազանը բաժակը բարձրացնելով խօսեց, ընորհակալութիւն յայտնեց և, ինչպէս սովորութիւն է, ճաշը վերջանալով, որ արդէն մութն էր, ամենքն էլ ուրախ արամադրութեամբ ցրուեցան իրենց տները։

Արիստակէս սրբազանը դեկտ. 3-ին դիլիջանայ գնացքով գնում է Էջմիածին և, ինչպէս «Кав.»-ն էլ իմացել է, Թիֆլիսի վիճակում իւր պաշտօնավարութեան հաշիւը տալու Նորին Վեհափառութեան։

—

Դեկտ. 10-ին Թիֆլիսի ժողովարանում լինելու է պարահանդէս վիճակախաղով, Հայ կանանց ընկերութեան օգտին։

—

Ստացանք «Մովսէս Խորենացու հայկական պատմութիւն», աշխարհաբար թարգմանեց և լուսաբանեց Խորէն Ծայրադոյն վարդապետ Ստեփանէ. Ս. Պետերբուրգ, Ի. Սկօրօխօգովի տպարան. 1889 թ. գինն է 1. 50 կոպէկ։

Ահա քանի ժամանակ է լրագրութեան մէջ անդադար լուրեր էին երևում Մովսէս Խորենացու աշխարհաբար թարգմանութեան մասին. դա վերջապէս տպուած է։ Շատերն անհամբեր սպասում էին դրա լոյս տեսնելուն և հաւատացած էին, որ Մովսէս Խորենացու պատմութիւնը, որ աշխարհաբար թարգմանելով մատչելի պիտի դառնար բոլոր ընթերցող հասարակութեան, պիտի պարզաբանած լինէր նաև բազմաթիւ ծանօթութիւններով, որոնք արդարև անհրաժեշտ են Մովսէս Խորենացու նման լակոնախօսի գրուածքն ըստ արժանւոյն գնահատելու համար։ Այժմ, որ այդ գրքի մասին մի փոքր աւելի խօսուի, ուստի թողնելով այդ ուրիշ անգամուայ, չենք կարող չնկատել, որ «Մովսէս Խորենացու» աշխարհաբար թարգմանութեան Արժ. թարգմանիչը կցել է նաև մի ընդարձակ առաջաբան 88 երեսից բաղկացած, բուն պատմութիւնը 351 երես է, ծանօթութիւնները, որոնք առանձին են գրուած վերջում, կազմում են 290 երես, և յետոյ յաւելուած 34 երես։

—

Այս շաբաթ չկարողացանք Տմբլայի Խաչանի «Ծնգլբազը» հրատարակելու, մեզ առաջիկայ շաբթուան համար։

—

Ուրբաթ օրը Բագուի պօստը չատ ուշ առաւօտով, Բագուից ստացուած տեղեկութիւնները չկարողացանք սոյն համարում հրատարակել։

—

«Ինֆլուէնցա»-ն զգալի է նաև Թատրոնի համար. նոյեմբերի 26-ին Թիֆլիսի օպերային Թատրոնում պիտի ներկայացնէին «Հուգենօտներ» օպերան, բայց ս. տ. Բօսսէ և Լատեր նների, նոյնպէս և պ. Մօլչանովսկի հիւանդութեան պատճառով չկայացաւ և նրա տեղ ներկայացրին «Ֆաուստ»-ը։ Այժմ դերասաններից չատերը հիւանդացել են ինֆլուէնցայով և անցեալ օրը ներկայացումը խափանուեցաւ։

—

Թիֆլիսի պարսից ընդհանուր հիւպատոսը, ինչպէս լսել են տեղական թերթերը, նշանակուած է Լօնդոնում պարսից դեսպան։

—

Ստացանք «Գրականական և պատմական» հանդէսի երկրորդ գիրքը։ Մենք առաջին գրքի մասին թէև խոստացել էինք խօսել, բայց յարմար առիթ չլինելով, մինչև այժմ չկարողացանք մենք կարիսաանք չուսով խօսել երկու գրքի մասին միասին։

—

Ինչպէս երևում, Թիֆլիսի քաղաքային կրակի դէմ վոխադարձ ապահովութեան ընկերութիւնն իրեն հետևողներ է գըտնում նաև Կովկասի ուրիշ քաղաքներում։ Այսպէս օրինակ, անցեալներս Բագուի քաղաքային վարչութեան անդամ պարոն Անտօնեանցը դիմելով Թիֆլիսի քաղաքային վարչութեան, խնդրել էր յիշեալ ընկերութեան կանոնադրութիւնը։ Ինչպէս երևում է, բազուցիներն էլ ուզում են այդպիսի մի ընկերութիւն հիմնել և զանազան հրդեհի դէմ ապահովութեան ընկերութիւնների կորզած ահագին գումարներն իրենց մօտ պահել։

—

Բագուի թերթերից իմանում ենք, որ պ. Կարա-Մուրզայի հրաժեշտի կօնցերտը մեծ աջողութիւն է ունեցել և ինքը պ. Կարա-Մուրզան համակրական բուռն ցոյցերի առարկայ եղել։

—

ՇՈՒԼԱՒԵՐԻՑ. — Վերջին ամիսների ընթացքում մեր գիւղը զբաղուած է նոր ընտրուելիք տանուտէրով։ Նիկոլ կուսակցութիւնների են բաժանուել, աղքատ և միջին դասակարգը նոր տանուտէրի կողմն է, իսկ ճաճանականները՝ հին տանուտէրին։ Այդ ինտրիգներն այն տեղը հասցրին, որ նահանգական բարձր վարչութիւնը դրանց վերջացնելու համար հարկաւոր համարեց միջամտել։ Թիֆլիսի նահանգապետի առաջարկութեամբ և կառավարչապետի թոյլտուութեամբ Շուլաւերի գնակիչների վերայ կառավարութիւնից նշանակուում է տանուտէր տեղիս վարչութեան ընտրութեամբ տարեկան 600 ր. և երեք չափար՝ իւրաքանչիւրը 180 ր. ռոճիկներով։ Այդ բոլոր փողը, ինչպէս հաղորդում են «Тиф. Лис.»-ին, պէտք է ժողովուրդը վճարէ։

—

Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը ֆինանսների մինիստրութեան հետ համաձայնութիւն կայացնելով, առանձին կանոններ է մշակում, որոնք, «Н. В.»-ի ասելով, պէտք է գործադրութեան ներքին նաւային հաղորդակցութեան ճանապարհի վրայ կերօսինի և նաւթ զտող գործարաններ չինելու համար։

—

ՍԻՄՖԵՐՕՊՕԼԻՑ.—Նոյեմբերի 18-ին առաւօտեան դէմ, քաղաքիս հայցապործի մը փուռ, ուր կաչխատէին կարմիրգցի կաթոլիկ հայոցմէ Գալուստ Սըբար օղլի յիսնամեայ քաջ ծերունին իրեն 18 տարեկան Աւետիս որդւոյն և Սարգիս Ռապաթցի նոյնպէս 18 տարեկան երիտասարդին հետ, երեքն ալ սպանուած գըտնուեցան։ Բոլոր քաղաքը տակն ու վրայ եղաւ ի տես և ի լուր ցաւալի և միանգամայն զարհուրելի ոճրագործութեան, որի նմանը երբէք լսուած չէր ի Սիմֆերօպօլ։

Քաղաքին ոստիկանութիւնը եղեռնագործութիւնն լմնանալով, զօրութեամբ դիմաց յիշեալ փուռը տոյգ տեղեկութիւն ստանալու և միանգամայն չարագործը կալանաւորելու համար, բայց մարդասպանը չգտնելով, իսկոյն հեռագրոյ միջոցաւ հարկաւոր եղած նախատեսութիւնները կատարեց, որովհետև կասկած կար մէկ չորրորդ անձի մը վրայ, որ նոյն գիշեր աչխատէր յիշեալ փուռը սպանուած թշուառներուն հետ, որ նոյն գիշերը անհետացել էր քաղաքէն։ Վերջապէս ոստիկանութիւնը հասաւ իւր նպատակին, վասն զի նոյն օրը երեկոյեան դէմ կասկածաւոր անձը բռնուեցաւ Մելիտօպօլ, ուր փախչելով կը կարծէր անչուշտ ապահով վիճակի մէջ ըլլալ։ Փախատական բանուորը երկրապահ զինուորագ (gendarme) պահպանութեամբ Սիմֆերօպօլ բերուեցաւ. ներկայանալու ատենին դիմաց չարագործութիւնը ստուգելու համար։

Քաղաքիս հայցապործ ազգայինք, ի պատիւ իրենց գիւղակից եղբարց, ամսոյս 20-ին փառաւոր թաղում ըրին անգութ մահուամբ փոխելոց ի Տէր, որ ներկայ էին անթաւ բազմութիւն ազգայիններէն քաղաքիս, ինչպէս նաև օտար ազգիններէն մօտ 5000-ի չափ։

Եղեռնագործութեան քննութեան եղբակացութիւնը մեզի դեռ անծանօթ է, զոր ի ժամանակին կը համարձակինք չարունակել, առայժմ զգուչացնելով յարգոյ հասարակութեանը, որ արիւնն ըլլան յազագսին որ և իցէ անծանօթ անձի հատուցք ընծայելով, ծառայութեան պաչտամամբ տուներնին չընդունին։

—

Զրաբաչխական դեպարտաւէնտը, մայրաքաղաքի թերթերի ասելով, առաջնկայ գարնան կը զբաղուի Կասպից ծովի նաւարկութեան չարմար տեղերի քննութեամբ, մանաւանդ արեւելեան և արևմտեան ափերը, որոնք լաւ ուսումնասիրուած և քարտէզներէն վերայ էլ ուղիղ նչանակուած չլինելով, ծովի չատակի բարձրանալու պատճառով հինգ սոյն աչնան պատերազմական երկունաւի խորտակում պատահեցաւ, մինը «Նաար-էդդին-Շահ» և միւսը «Գեօֆթէփէ», որոնք քարտէզի վերայ չնչանակուած ծանծաղուտի և խութերի պատահելով խորտակուեցան։

—

Հրձիգութիւնների, սպանութիւնների, վիրաւորանքների և այլն երկար չարքին մէկին էլ աւելացաւ, գրում են Մխիթարովից տեղական թերթերին, Մօտերքս Կվիշխէտ կայարանում սպանել են մի երիտասարդ. եղեռնագործը, ի հարկէ, մինչև այժմ էլ անյայտ է մնում։ Ահա հենց այդ հանգամանքն է, որ առանձին չանդգնութիւն է տալիս մեր զանազան մութ հերոսներին։ Վերջին չորս ամսուայ ընթացքում բազմաթիւ չանցագործութիւններ են կատարուել, մինչդեռ արդարադատութեան ձեռքին միայն այն չարագործներն են գանուում, որոնք իրենք են անձամբ եկել և անձնատուր եղել, ինչպէս օրինակ Օրջանիկիձէն, որ Սուրամի հիւրանոցում սպանութիւն էր գործել։

—

ՍՂՆԱԽԻՑ.—Վրացիները պատրաստում են դեկտ. 3-ին ներկայացում տալու, կը ներկայացնեն «Բայ գինախաւմ, վհանը, որից առաւօրէն նեղս է լցուում արեւի չլայացնէ լոյսը, բայց նա այդ լոյսը չէ նկատում, նա ոչինչ չի մտածում...

Վերջապէս իւր չուրջ հառացող կհանքը հանեց նրան անդդայ վիճակից։ Սօֆիան անկողնից ելաւ, հագնուեց և պատուհանը բացեց։ Մի քանի րոպէ կանգնեց պատուհանի առաջ՝ թարմ օդ չընչելով։ Աղախինը հեչտառը բերեց և Սօֆիան մեքենայաբար սկսեց թէյ պատրաստել։

—Ինչի՞ մինչև այժմ Աղէքսանդրի յիչատակարանը աչքէ չեմ անցրած—յանկարծ յիչեց նա, ձեռքն ընկած բազմաթիւ ծրարած թղթերին։ Նրա սիրտը նուազում, ճմլում էր սարսափելի դառնակսկիծ ցաւով, երբ տեսաւ այդ, իրեն ծանօթ, աղատ գրչութիւնը և յիչեց դեռահաս, ծաղկահասակ և իրեն համար այն անդին արարածը։ Բայց այդ կսկծական, սուր ցաւը նրա համար աւելի թեթև էր համեմատութեամբ այն ախտոր անդդայ դրութեան, որի մէջ նա երէկուանից ընկել էր։ Այդ դառն տանջանքները ստիպելին նրան ապրել թէպէտև ցաւագին, բայց և կենդանի, իսկական կեանքով...

«Սեպտեմբերի 15-ին, բժիչկը արգելից սենեակից դուրս գալ», գրում էր Աղէքսանդր Գառնիցկին մեռնելուց չորս օր առաջ։ «Ես բոլորովին թուլացայ, այժմ տեսնում եմ, զգում եմ, որ չուտով, թերևս մի ամսից, պիտի մեռնեմ։ Մի անսովոր զղացումներով լցուում է սիրտս, երբ մահուան վրայ եմ մտածում...

Ես մահից չեմ վախենում... Ոչ, այս անսովոր զղացմունքս դրանից չէ. մեռնոյն է, մի օր ես պէտք է մեռնիմ... Այլ նրանից է, որ կեանքս գրեթէ ա-պարդիւն անցել, չատ բան նոր է

ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ

ԱՆԳԻՆ ԿՈՐՈՒՍՏ *)

(Վերջ)։

—

Սօֆիան չարունակ նստած էր ծովի ափում միևնոյն տեղը, մտախոհ, գժընդակ վչտով համակուած։ Նրա միտքը չարունակում էր գործել և հանդչել անցեալի յիչատակութիւնների մէջ. մէկը միւսի հետից անցնում, յաջորդում էին միմեանց—լուսաւոր, ուրախ, չնչասպառ և կարկամեցուցիչ մոքերին յաջորդում էին տխուր, մռայլ և անելոյս մտածմունքները... յանկարծ Սօֆիայի դէմքը ծածկուեց մահուան գունատութեամբ։ Միևնոյն գարնան փայլուն արևը, միևնոյն վսեմ հպարտ անտառը, միևնոյն արբեցուցիչ դիւրաւի ջրեր խաղող գարնան մխնոլորտը, միևնոյն ուրախ խօսակցութիւնը և աղաղակը օդի մէջ...։ Բայց միայն արևի պայծառ ճառագայթները առաւել առատօրէն սփռուում են ամբողջ բնութեան մէջ, երիտասարդ անտառը աւելի վսեմ է երևում, օրից օր արագ պճնուելով իւր նոր կանաչ քօղով, մխնոլորտը իւր սաստիկ ջերմութեամբ աւելի ևս քնքչացնում է, իսկ օդի մէջ լսուած միջատների ուրախ չրչուկն աւելի ևս անհոգ դարձել, որոնք հաղարներով չրջելով կարծես մի ուրախ աղմկալից ոճն էլին կատարում։

Բնութիւնը իւր կախարդիչ գեղեցկութեամբ աւելի հրապուրիչ էր, բայց նա այլ ևս չէ հիացնում Սօֆիայի սիրտը, այլ ևս նրա արտի մէջ, ինչպէս երբեմն, երջանկութեամբ լի կեանքի յորդահոս հրճուանքները չէ ներչնչում...

*) Տես «Նոր-Դար» № 199։

—Միայն երեք ամիս կը բաժանուենք, սիրելիս, ասում է Աղէքսանդրը,—այժմ մարտի վերջն է. երեք ամսից ես Պալտայից կը գամ առողջ աղամարդ դարձած, և անմիջապէս կը գնանք մեր հարսանիքը կատարելու։

Սօֆիան լուռ է և միայն վարանած նայում է իւր ընկերոջ նիհար, դունատ դէմքին։ «Ինչպէս է, որ մինչև այժմ չէի նկատած ոչ այդ աչքերի տակի կապոյտ բոլորակները, ոչ այդ խոր ընկած այտերի չարագուչակ կարմրութիւնը և ոչ այդ երբեմնական չոր հազը, որն այժմ այդպէս չարունակ կոոր կոոր է անում նրա կուրծքը»—մտածում է Սօֆիան և յօդերի մէջտեղի փոքրիկ կնճիռները, որ միշտ երկիւղի միջոցին երևան էին գալիս, դառնում են աւելի ու աւելի խոր և նրա ամբողջ դէմքին մի խուլ յուսահատութեան և ընկճող սարսափի արտայայտութիւն տալիս։

—Ձմարիտն ասած ես մի առանձին ուշադրութիւն չէի դարձնիլ բժչկի ըստիպմունքին—չարունակում էր Աղէքսանդրը, միչտ հազալով, բայց՝ բանը ընդունում է, որ ես ինձ չատ վատ եմ զգում։ Դեռ անցեալ գարնան էլ ես մի քիչ հիւանդ էի, բայց երևի այս տարին ինձ սաստիկ յոգնեցրեց, չափազանց աչխատեցայ։ Պէտք է չափաւոր լինել, իսկ ես չափից անցայ։ Բայց վերնաս չունի։

Ա՛յ, կը գնամ Եալտա, ամբողջ երեք ամիս քէֆով կհանք կանցնեմ և կը տեսնես, թէ ինչպէս դուարթ կը վերադառնամ, լսում ես, Սօֆիա... դառնում է դէպի նա. բայց ինչո՞ւ ես տխուր, քիչ բանի վրայ ես մտածում... կարծես ինձ թաղելու ես պատրաստում։ Նայիր ինձ, մէթէ այսպիսի մեռելներ կը լինին,—ուրախ ծիծաղով ասաց նա, և պինդ սեղմեց նրան իւր գրկի մէջ...

Սօֆիան ամբողջապէս դողում է և կանգ է առնում անցեալի այս յիչատակութեան վրայ։ Այստեղ վերջանում են նրա կեանքի թանկագին, երջանիկ րոպէները։ Այս հաճելի պատկերներից յետոյ, նա չէ ուզում յարուցանել իւր յիչողութեան մէջ այդ մի քանի երջանիկ օրերից յետոյ պատահած դէպքերը։ Բայց այս ամենը, որ հիմայ նրա երևակայութեան առաջից այդպիսի ճչգրտութեամբ ու կինդանութեամբ անցաւ, անհետ կորած է նրա համար։ այդ բոլորը որպէս գեղեցիկ երազ մնացին նրա յիչողութեան մէջ և յիրաւի իրական, սարսափելի ճչմարտութիւնը միայն այն է, որ նա մենակ է այժմ, մենակ ամբողջ աչխարհում...

Ջղացոտութեամբ հեծկլտանքները խեղդում էին նրան։ Սօֆիան անզդայ ընկաւ գետնի վրայ և երկար ժամանակ նրա բարձր հեծեծանքները խլացնում էին ծովի անընդհատ ափը՝ լոկ տխուր ու աղբատին արձագանգ անդրադարձնելով լուռ չրջակայքում։

Նրա չէկ արևն արդէն հորիզոնից յուչիկ իջնում էր ցած և կարծես ակամայ բարև մնայ անելով նոյնչ բնութեան իւր յետին մարմրող նչոյլներով սահում էր նորաբողբոջ ծառերի գագաթների վրայից։ Ծովի կողմից չնչում էր մի զով քամի, որից Սօֆիայի տանջուած մարմինը մի սուր անդդային դող առաւ։ Սօֆիան վեր կացաւ և իւր յոգնած կրծքով չնչեց թարմ լոնաւ օդ։ Գլուխը խառնուում էր զգոյնս թմբրեցուցիչ ածխային գոլորշուց։ «Հա՛... չէ որ ես այստեղ եկայ իմ արդի դրութեանս վրայ լաւ խորհելու և մի բան վճռելու»—յիչեց նա,—տարօրինակ նայուածքով իրեն անծանօթ վայրերը դիտելով։ Բայց հոգս կրած այդ ծանր ճգունքից յետոյ, նա յանկարծ մի դատարկութիւն զգաց. ոչ մի մտածմունք, ոչ մի զղացմունք...

Մի տեսակ խիստ յոգնածութիւն և տկարութիւն տարածուեց նրա ամբողջ մարմնի մէջ, Շնչառութիւնը յամրացաւ, ասես թէ երակների մէջ սառած լինէր արիւնը...

Երեկոյեան ուչ ժամանակ վերադարձաւ հիւրանոց։ Տառն կասկածանքով մի քանի անգամ նայեցաւ նրան և հարցրեց.

—Կամենում էք հեչտառ բերեմ։

—Ոչ, հարկաւոր չէ, պատասխանեց Սօֆիան նուազած ձայնով և իսկոյն անկողնի վրայ ընկաւ։ Տանը քունը փակեց նրա աչքերը։

Իսկ լրացած լուսինը սահելով մութ և խիտ ամպերի մէջից մի տեսակ հեռաքրքրութեամբ նայում էր սենեակի միակ նեղ պատուհանից և խաղում իւր լուսով դռնան, սխտոր դէմքի վրայ, որ խոր քնի մէջ էր ընկղմել...

—

Միւս օրը Սօֆիան ուչ զարթնեցաւ, անհանդիստ և կայտառ ճնճղուկն արդէն վաղուց երթուում էր նրա պատուհանի տակ անդադար ճռուողելով և թռչկոտելով մի լուսամուտից միւսը։ Աչնան արևն արդէն երեք ժամ է, որ յառաչել էր հեռու կապոյտ սարերից և կամաց լողում էր կապոյտ, անամպ երկնքի մէջ տեղը։ Փողոցում անհարթ սալայատակի վրայ կատարուած անընդհատ երթևեկութիւնից բարձրանում էր մի խուլ միակերպ թնդիւն։ Միջանքում արդէն վաղուց սպասաւորները չրջում էին յետ և առաջ։

Սօֆիան, արթնանալով մի քանի րոպէ միացել էր մի տեսակ թմրութեան մէջ։ Բայ աչքերը նայում են դէպի պատուհանը, որի առաւօրէն նեղս է լցուում արևի չլայացնէ լոյսը, բայց նա այդ լոյսը չէ նկատում, նա ոչինչ չի մտածում...

Վերջապէս իւր չուրջ հառացող կհանքը հանեց նրան անզդայ վիճակից։ Սօֆիան անկողնից ելաւ, հագնուեց և պատուհանը բացեց։ Մի քանի րոպէ կանգնեց պատուհանի առաջ՝ թարմ օդ չընչելով։ Աղախինը հեչտառը բերեց և Սօֆիան մեքենայաբար սկսեց թէյ պատրաստել։

—Ինչի՞ մինչև այժմ Աղէքսանդրի յիչատակարանը աչքէ չեմ անցրած—յանկարծ յիչեց նա, չնայելով սեղանի վրայ դրուած բազմաթիւ ծրարած թղթերին։ Նրա սիրտը նուազում, ճմլում էր սարսափելի դառնակսկիծ ցաւով, երբ տեսաւ այդ, իրեն ծանօթ, աղատ գրչութիւնը և յիչեց դեռահաս, ծաղկահասակ և իրեն համար այն անդին արարածը։ Բայց այդ կսկծական, սուր ցաւը նրա համար աւելի թեթև էր համեմատութեամբ այն ախտոր անդդայ դրութեան, որի մէջ նա երէկուանից ընկել էր։ Այդ դառն տանջանքները ստիպելին նրան ապրել թէպէտև ցաւագին, բայց և կենդանի, իսկական կեանքով...

«Սեպտեմբերի 15-ին, բժիչկը արգելից սենեակից դուրս գալ», գրում էր Աղէքսանդր Գառնիցկին մեռնելուց չորս օր առաջ։ «Ես բոլորովին թուլացայ, այժմ տեսնում եմ, զգում եմ, որ չուտով, թերևս մի ամսից, պիտի մեռնեմ։ Մի անսովոր զղացումներով լցուում է սիրտս, երբ մահուան վրայ եմ մտածում...

Ես մահից չեմ վախենում... Ոչ, այս անսովոր զղացմունքս դրանից չէ. միևնոյն է, մի օր ես պէտք է մեռնիմ... Այլ նրանից է, որ կեանքս գրեթէ ապարդիւն անցել, չատ բան նոր է

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՄԱՐՏԻՆ ԼՈՒԹԵՐ

Ի ՎԱՅՐԵՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ՄԱՐՏԻՆ ԼՈՒԹԵՐԻ

—

Ի ՀԱՅՐԵՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ՄԱՐՏԻՆ ԼՈՒԹԵՐԻ

Մարտին Լութեր ծնած է 1483 Նոյեմբեր 10-ին Էյսլեպէն, Սաքսոնիոյ մէջ, ուր հայրը՝ Հանս Լութեր, հանքագործ էր։ Մայրը՝ Մարգարիտ Լինտեման, ազնուական ընտանիքէ մը կը սեպուէր։ Մարտին Լութեր ուսում առաւ Մանսֆելտ, Մակդեպուրկ եւ Էյզենախ։ Ան 1501-ին մտաւ Էրֆուրտի համալսարանը, ուր 1505-ին ստացաւ վարդապետի աստիճան։ Նոյն տարին ան մտաւ Օգոստինեան միաբանութեան մէջ։ 1507-ին ձեռնադրուեցաւ քահանայ։ 1508-ին Վիթենպերկի համալսարանին մէջ նշանակուեցաւ դասախօս։ 1510-ին Հռոմ գնաց։ Վերադարձին ան ստացաւ աստուածաբանութեան դոկտորի աստիճան։ 1512-ին նշանակուեցաւ Վիթենպերկի համալսարանի աստուածաբանութեան պրոֆեսոր։ Ան 1517-ին Վիթենպերկի դպրոցական եկեղեցւոյ դրան վրայ գամեց իր 95 դրոյթները, որոնք կը քննադատէին կաթոլիկ եկեղեցւոյ ներքին կեանքը։ Այդ դրոյթները կարճ ատենուան մէջ տարածուեցան ամբողջ Գերմանիոյ մէջ։ Ան 1518-ին Աւկսպուրկի մէջ հանդիպեցաւ Կայետանոս կարդինալին հետ, որ Հռոմի կողմէ պատուիրակ էր նշանակուած։ Կայետանոս կարդինալը պահանջեց, որ Լութեր հրաժարի իր գաղափարներէն, բայց Լութեր չհրաժարեցաւ։ Ան 1519-ին Լայպցիկի մէջ հանդիպեցաւ Էքքին հետ եւ հերքեց անոր գաղափարները։ Ան 1520-ին հրատարակեց իր գրութիւնները, որոնք կը քննադատէին Հռոմի պապը։ Ան 1521-ին Վորմսի ժողովին մէջ հրաւիրուեցաւ հերքելու իր գաղափարները, բայց չհերքեց։ Ան 1521-ին Մայիսին Վարտպուրկի ամրոցին մէջ ապաստանեցաւ։ Ան հոն մնաց մինչեւ 1522-ի Մարտ։ Ան 1525-ին ամուսնացաւ Կատարինա Պորա հետ։ Ան 1546-ին Փետրուարի 18-ին մեռաւ Էյսլեպէնի մէջ։

—«Standard»-ի Փարիզեան թղթակիցը կը հաստատէ, որ Գերմանիան 150,000 զօրք է տարած Ֆրանսայի դէմ։

—Ա՛յ, վիճակուած մի պրծնիս հիմա։

—Ասդղեմսի...

Իմ ձայնս իմ կոկորդիս մէջ մնաց, երբ Ռոպէրտ Ֆրանսուան ինձ ըսաւ.

—Ես կ՚ուզեմ, որ դուն ինծի հետ գաս Ամերիկա։

Ես ոչինչ պատասխանեցի։ Ես ինքզինքս կորսուած կը զգայի։ Ես կ՚ուզէի ինքզինքս հաւաքել, մտածել, որոշել։ Ես կ՚ուզէի ինքզինքս ազատ զգալ, որպէսզի կարենայի ինքզինքս տալ։ Ես կ՚ուզէի, որ ինծի ոչ ոք ձայն չհանէ, ոչ ոք ինծի չդիպչի, ոչ ոք ինծի չխօսի։ Ես կ՚ուզէի, որ ինծի ոչ ոք չհարցնէ, ոչ ոք ինծի չխնդրէ։ Ես կ՚ուզէի, որ ինծի ոչ ոք չհրամայ

լէքսանդրովչի անուանակոչութիւնը.

7 —Եչ. ք§.—Լա. 27. Ն. Տ. գեկ. 19. Տրէ 29. Մակարայ ոօն է։

ը —Ուբ. բկ.—Լա. 28. Ն. Տ. Դեկ. 20. Տրէ 30.

9 —Շբ. գ§.—Լա. 29. Ն. Տ. Դեկ. 21 Քաղոց 1.

Պօստային երէվանեան ռաղմավիրական Ճանապարհի վրայ

Թիֆլիսից դուրս է գալիս

Հինգ հոգու տեղ ունեցող վակ կառքը, առ. 8 ժամին, գնչերքում է Մլխեթում, միւս օրը երեկոյեան 8 ժամին հասնում է Վլադիկաւկազ.

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսը, երեկոյեան ժամը 4-ին, առանց գնչերքուայ, միւս օրը երեկ. ժամը 7-ին հասնում է Վլադիկաւկազ։

Վլադիկաւկազից դուրս է գալիս

Հինգ հոգու տեղ ունեցող վակ կառքը դուրս է գալիս առաւօտեան ժամը 8-ին, գնչերքում է Մլխեթում, միւս օրը երեկոյեան ժամը 8-ին գալիս է Թիֆլիս։

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսը երեկոյեան ժամը 8-ին, առանց գնչերքուայ, միւս օրը երեկոյեան ժամը 10½-ին հասնում է Թիֆլիս։

ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ՍԵՒ ԾՈՎԻ ՎՐԱՑ

Բաթումից նաւը գնում է

Հինգշաբթի, ուղիղ գծով, Նովօրօսիյսկի և Սուխումի վրայով, Ճաշից յետոյ ժամը 4-ին.

Շաբաթ, շրջանառու գծով, բոլոր նաւահանգիստների վրայով, երեկոյեան ժամը 8-ին.

Հոբելշաբթի, Արտասահմանեան գծով, կ. Պոլիս, երեկոյեան։

Բաթումի գալիս է

Երեքշաբթի, Օդեսայից, շրջանառու գծով, կէս գիշերին մօտ։

Ուրբաթ, Օդեսայից, ուղիղ գծով, կիրչի և Նովօրօսիյսկի վրայով, առաւօտը։

Երեքշաբթի, կ. Պոլսից, առաւօտը։

Փօթիից Բաթում գնում է

Հինգշաբթի, առաւօտեան ժամը 9-ին, Արիմ-Նովիկասեան ուղղագիծ շոգենաւին.

Շաբաթ, առաւօտեան ժամը 9-ին, Արիմ-Նովիկասեան շոգենաւին։

Բաթումից Փօթի գնում է

Ուրբաթ, կէս օրից յետոյ, ժամը կէշահին, մօտ 2-ին։

Երկանաւու ապրանքակիր նաւը

Գալիս է Փօթի, երկուշաբթի առաւօտը։ Գնում է Բաթում, չորեքշաբթի։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Երթևեկութիւն «Թիֆլիս» կայարանում

Գնում է

Բաթում, պօստային.	9 ժ.	3 վ. առ.
Բագու, »	12 ժ.	13 վ. գիշ.
Բաթում, մար. ապ. գն.	1 ժ.	54 վ. ց.
Ելիսաւետ. խառն գն.	8 ժ.	35 վ. առ.

Գալիս է

Բաթումից, պօստ.	10 ժ.	58 վ. եր.
Բագուից, »	7 ժ.	57 վ. առ.
Բաթումից, մար. ապ.	8 ժ.	20 վ. առ.
Ելիսաւետ. խառն գն.	8 ժ.	44 վ. եր.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ

ՀԱՅԵՐԷՆ ՀԱՏՈՒԱԾԱԿԱՆ (պատ.)

ՕՐԱՑՈՅՑ

1890 ԹՈՒԻ

Եւ Հայկայ ՏՅԶԲ (4382) Թուականի

ՅԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՄԲ։

(Երէցարէ տպրէ)

ԳԻՆՆ Է

	Ր.	Կ.
Հատով առնողին . .	1	—
Յանապարհի ծախքով.	1	25
25 օր. գնողին. . .	—	80
50 » » . . .	—	75
100 » » . . .	—	70
300 » » . . .	—	65

Յանապարհի ծախքը գնողի վրայ է։

Կոմմիսիայով վաճառողին 15 %։

Հասցէն. Տփղիս, ԳԻՒՏ ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆ։

3—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԱԻԱԳՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Խնդրում է նոյն ժողովարանի պ. պ. անգամներին շնորհ ընել ուրբաթ, դեկտեմբերի 8-ին, երեկոյեան ժամը 10-ին ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ, ուր քննութեան են հետևեալ հարցերը. 1, աւագների ժողովի զեկուցումն 1886 թուականի տարեկան հաշուի մասին և նոյն առիթով տուած պ. Սալամբէգեանի բացատրութիւնները և 2, ժողովարանի 70 անդամների յայտարարութիւնը։ Կը լինի նաև կանդիդատների քուէարկութիւնը։

3—1

Կիրակի, դեկտեմբերի 10-ին Թիֆլիսի ժողովարանի դահլիճում լինելու է

ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Վիճակախաղով յօգուտ Հայուհեայ Բարեգործական ընկերութեան։

Տոմսակների գինն է տլմարդկանց 2 ր., կանանց 1 ր.

2—1

Въ городѣ Старомъ-Крыму, Өеодос. уѣзда

ПРОДАЕТСЯ ДОМЪ,

Принадлежащій наслѣдникамъ Николая Ивановича Бенкліева каменная постройка, крытый черепицею, угловое мѣсто, въ центрѣ города.

Обращаться письменно—Черезъ *Тамань* въ *Старо-Титровку*, Егору Николаевичу Бенкліеву. 15—15

ԹԻՖԼԻՍՈՒՄ ՆՈՐ ԲԱՑՈՒԱԾ

„ԿՈՎԿԱՍ“

ՉԻՆԱԳՈՐԾԱՐԱՆ

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է պատուէրներ

ՆՈՐ ՁԵՒԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒԱԾ

Թէ կեդրոնական (центральнаго боя) և թէ լցնովի (шомпольное) հրացանները, նոյնպէս մօնտէկրիստօները շինելու։

Նաև ընդունում է նորոգութեան համար ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ատրճանակներ. վերոխոտ է ՀԻՆ հրացանները ՆՈՐ ձևերի (система)։

Չինագործարանը գտնւում է Սալդատսկի բազարում, Կուզնեց կի փողոցի վրայ։

Հասցէն նամակների և հեռագիրների համար՝ Тифлисъ, Алоянцъ.

X—27

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՒՒՄԻ Է

ԳԷՈՐԳ ՉՈՒԲԱՐԻ

ՎԷՊԵՐԸ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

1) ԲԱՐԵԳՈՐԾՆԵՐ
2) ՄԻ ՎԱՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
3) ՄԱՀՏԵՍԻ ՍԱՐԳԻՍ.
4) ՆՈ. ՍՊԱՍՈՒՄ Է ԴԵՌ
5) ՅԻՄԱՐ ՈՁԽԱՐՆԵՐ
6) ՄՈՌԱՑՈՒԱԾ ՇՈՒՆ.

Բոլորը մէկ հատորի մէջ ամփոփուած. արժէ 1 ր. 50 կոպէկ։

Յանկացողները թող դիմեն «Նոր-Դար»-ի խմբագրատունը, Тифлисъ, Редакція «Норъ-Даръ» հասցէով։

X—38

Ա. ՎՕԼՖՇՄԻՏ

ՐԻԳԱՅՈՒՄ, ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ԵՒ ՀԱՄԲՈՒՐԳՈՒՄ,

ԴՈՀՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ 1845 ԹՈՒԱԿԱՆԻՑ։

ՑՔԱՀԱՆ-ԹԻԹՄՈՐԻ ԵՒ ՕՂԵՀԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ։

Մասնաւորապէս պատրաստում է.—արրիկօտին, բենեդիկտին, շարտրեզ, հօլլանդական կակաօ, սուրճի մարասկին, մրգերից լեկեօրներ, Կիևի թուրջ, մրգերից թուրմեր, տմիններ, օղիներ, րոմ, կօնեակ, արակ, միակ-իսկական բիժակ-կունցինեան խառատին բալասան, սպիրտ, զտած գինի, սեղմած ճըմլամոր և այլն։

Մեր պատրաստած արտասահմանեան լիկեօրներն իրենց յատկութեամբ յետ չեն մնալ արտասահմանից բերուածներից, և անհամեմատ աժան են։ Բոլոր Համաշխարհային և այլ Ցուցահանդեսներում նրանք արժանացել են ամենաբարձր պարգևի։

ՕՂԵՀԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԾԱԽՈՒՄ ԵՆ ԲՈԼՈՐ ԳԻՆԵՎԱՃԱՌՆԵՐԻ ՄՕՏ։

Պրէյս-Կուրանտը ուղարկւում է յղկաբար

(առ.) 10—4

Սկսեալ 1889 թուականի Դեկտեմբերի սկզբից, կառավարութեան թոյլտուութեամբ

„ԱՐՁԱԳԱՆՔ“

ՁԱՓԱԹԱԹԵՐԹԸ կսկսի հրատարակուել ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ.

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ «ԱՐՁԱԳԱՆՔԸ» կը հրատարակուի այժմեան ծրագրով, աւելի մեծ դիրքով և աւելի ճոխ բովանդակութեամբ։

Լոյս կը տեսնէ շաբաթը մի անգամ, կիւրակի օրերը։

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ «ԱՐՁԱԳԱՆՔԸ» կը պարունակէ հետևեալ պատկերները և նկարները.

I) Պատկերներ Հայրենի և օտար ժամանակակից ու պատմական դործիչների, հռչակաւոր պետական ծառայութեան, գիտութեան, գրականութեան և գեղարուեստի առաջարկում։

II) Պատկերներ արձանների, զանազան տեսարանների և պատ-

III) ճէներ գեղարուեստական նկարներին։

III) Ուրուագիծներ, գծագրութիւններ, լուսանկարներ տեղագրական և հնադիտական բովանդակութեամբ։

IV) Ճարտարապետական, դրամագիտական և դրօշագրական նկարներ։

V) Ծաղկանկարներ և քառախազութիւններ։

Պատկերազարդ «Արձագանքի» համար Պետերբուրգում գործին հմուտ անձնանից կազմուած է մի առանձին յանձնաժողով, որ պիտի մատակարարէ Պատկերազարդ «Արձագանքի» պատկերների վարագրութիւնները արտասահմանից և Պետերբուրգից։

Առաջիկայ տարուայ համար արդէն պատուիրուած են և շուտով կը սպասուին մեր ծրագրին համեմատ բազմաթիւ պատկերներ։

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ «ԱՐՁԱԳԱՆՔԸ» կը տպագրուի ընտիր և յատկապէս պատուիրուած թղթի վրայ։

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ «ԱՐՁԱԳԱՆՔԻ» բաժանորդագինն է տարեկան ՏԱՍՆ րուբլի, կէս տարով ՎԵՑ րուբլի։

Առաջին տարուայ բաժանորդները թերթս կը ստանան 1889 թ. դեկտեմբերի 1-ից մինչև 1891 յունվարի 1-ը, այսինքն մի տարի և մի ամիս։

Առանձին բաժանորդագրութիւն չէ ընդունւում։

Թիֆլիզում բաժանորդագրութիւն ընդունւում է խմբագրութեանս մէջ, կենտրոնական գրավաճառանոցում և խմբագրի մօտ (Փոխադարձ վարկի Ընկերութիւն)։

Օտար քաղաքներից պէտք է դիմել՝ Тифлисъ, Редакція еженедѣльнаго иллюстрированнаго журнала „Ардзаганкъ“: Իսկ արտասահմանից՝ Tiflis (Caucase, Russie) Redaction du journal illustré «ARDZAGANK».

(Խմբ.) Խմբագիր հրատարակիչ՝ ԱՐԴԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.

8—5

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1890 Г.

VI-й ГОДЪ ИЗДАНІЯ.

„Ремесленная Газета“ ОДОБРЕНА Учен. Комит. Мин. Нар. Просвѣщенія: 1) для техническихъ и ремесленныхъ училищъ—мужскихъ и женскихъ; 2) для городскихъ и сельскихъ училищъ, 3) для учительскихъ институтовъ и семинарій, а также 4) для библіотекъ реальныхъ училищъ.

„РЕМЕСЛЕННАЯ ГАЗЕТА“

ЕЖЕНЕДѢЛЬНОЕ изданіе съ **рисунками** въ текстѣ и съ приложеніемъ, сверхъ того, **при каждомъ нумерѣ не менѣе двухъ** листовъ исполнительныхъ чертежей и образцовыхъ рисунковъ новыхъ издѣлій, инструментовъ, станковъ, приспособленій и пр. предметовъ по **различнымъ ремесламъ**, а также **кустарнымъ и мелкимъ фабрично-заводскимъ** производствамъ.

Кромѣ множества разнообразнѣйшихъ чертежей и рисунковъ, въ „Ремесл. Газетѣ“ будетъ помѣщенъ рядъ **описаній: различныхъ ремесленныхъ производствъ, новѣйшихъ изобрѣтеній, усовершенствованій, выставокъ**; музеевъ, **образцовыхъ** ремесленныхъ и техническихъ **школъ**, частныхъ промышленныхъ **мастерскихъ и пр.**

НОВОСТИ ПАРИЖСКОЙ ВЫСТАВКИ.

Объ отдѣлѣ техническихъ и ремесленныхъ школъ на Парижской всемірной выставкѣ также будутъ напечатаны подробныя сообщенія отъ нашего корреспондента.

Кромѣ **ЕЖЕНЕДѢЛЬНЫХЪ** сообщеній о различныхъ **заграничныхъ новостяхъ**, редакція будетъ давать **БЕЗПЛАТНО отвѣты и совѣты** на запросы гг. подписчиковъ, относящіеся до ихъ спеціальности.

Редакція имѣетъ спеціальныхъ корреспондентовъ за-границей въ большихъ промышленныхъ центрахъ, получаетъ отъ нихъ лучшіе образцы новѣйшихъ издѣлій и множество рисунковъ съ описаніями.

Контора изданія оказываетъ иногороднымъ гг. подписчикамъ **БЕЗПЛАТНО** всевозможное **СОДѢЙСТВІЕ** по различнымъ справкамъ, также по выпискѣ книгъ, инструментовъ и др. предметовъ, которые высылаются по первому требованію немедленно **СЪ НАЛОЖЕННЫМЪ платежомъ.**

„Ремесленная Газета“ даетъ своимъ подписчикамъ **50 №№ ВЪ ГОДЪ**, содержащихъ до 1000 статей **со множествомъ** рисунковъ (гравюръ) въ текстѣ, и **БОЛѢЕ СТА** листовъ приложеній (замѣняющихъ преміи къ „Рем. Газ.“), которыя отдѣльно **стоятъ** въ розничной продажѣ **СВЫШЕ 20 р. с.**

Редакція въ состояніи давать все это своимъ читателямъ лишь въ виду ихъ **многочисленности и широкаго развитія своего дѣла.**

ПОДПИСНАЯ ЦѢНА: 6 РУБ ВЪ ГОДЪ съ перес. и доставкой, (за пол-года **4** р.).

„РЕМЕСЛЕННАЯ ГАЗЕТА“ необходима спеціальнымъ школамъ, технику, ремесленнику, кустарю, торговцу, сельскому хозяйну, любителю ремеслъ и потребителю ремесленныхъ издѣлій.

АДРЕСЪ РЕДАКЦІИ: Москва, Малая Дмитровка, домъ Алексѣева. 3—2

Дозволено цензурою. Тифлисъ, 1-го Декабря 1889 г. Տպարան Կաւկազ լրագրի գրատեղեակի Типографія конторы газеты Кавказъ, Гол. пр., д. Читахова